ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 04.05.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2020/83

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ «Գոլդշին» ՍՊԸ-ի ներկայացուցիչ

Ա. Բարսեղյանի (լիազորագիր տրված՝ 04.05.2020թ.)

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 16.04.2020թ. թիվ 26/26-1/5678-2020 գրությամբ «Գոլդշին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի 13.04.2020թ. թիվ Ե/40/573-20 գրության հիման վրա, 16.04.2020թ. թիվ 26/26-1/5678-2020 գրությամբ նախաձեռնել է «Գոլդշին» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Գոլդշին» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Գոլդշին» ՍՊ ընկերությունը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 27.04.2020թ գրությամբ հայտնել է, որ ՀՀ պարետի կողմից հաստատված արտակարգ դրությամբ պայմանավորված սահմանափակումների պատճառով չի կարողացել գնալ աշխատավայր և շտկել անհամապատասխանությունը:

«Գոլդշին» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/83 ընթացակարգի շրջանակներում 24.04.2020թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով իր հերթին պնդել է վերը շարադրված դիրքորոշումը:

3. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 13.04.2020թ. թիվ Ե/40/573-20 գրությամբ հայտնել է, որ «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-38/20» ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի շրջանակներում «Գոլդշին» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է հայտ:

Հայտերի բացման և գնահատման նիստում արձանագրվել է, որ «Գոլդշին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են անհամապատասխանություններ: Համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 41-րդ կետի՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային եղանակով այդ մասին ծանուցել է մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Սահմանված ժամկետում մասնակցի կողմից անհամապատասխանության շտկում չի կատարվել:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ընթացակարգի շրջանակներում 24.04.2020թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ՆԳ-2020/83 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ՆԳ-2020/83 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կարիքների համար շինանյութի, շինապրանքների և սոսինձների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-38/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Գոլդշին» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.04.2020թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Գոլդշին» ՍՊԸ-ի հայտը մերժվել է՝ արձանագրված անհամապատասխանությունը չշտկելու հիմքով:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 16.04.2020թ. թիվ 26/26-1/5678-2020 գրությունը, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի 13.04.2020թ. թիվ Ե/40/573-20 գրությունը և կից փաստաթղթերը, ինչպես նաև «Գոլդշին» ՍՊԸ-ի դիրքորոշումը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի

«դ» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Այսպիսով՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կարիքների համար շինանյութի, շինապրանքների և սոսինձների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-38/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Գոլդշին» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը 01.04.2020թ. ծանուցել է Ընկերությանն այն մասին, որ հայտով ներկայացված Հավելված 1.1-ում (առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր) 96-րդ և 97-րդ չափաբաժիններում առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերում նշված են «կամ համարժեք», որոնցից պարզ չէ, թե ինչ ապրանքներ են առաջարկվում և նշված չեն քանակները՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.04.2020թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Գոլդշին» ՍՊԸ-ի հայտը մերժվել է՝ արձանագրված անհամապատասխանությունը չշտկելու հիմքով:

Հաշվի առնելով այն փաստական հանգամանքը, որ «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 16-ի թիվ 298-Ն որոշման հիման վրա ՀՀ պարետի 31.03.2020թ. «Արտակարգ դրության իրավական ռեժիմով պայմանավորված Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում կիրառվող սահմանափակումների վերաբերյալ» թիվ 27 որոշմամբ Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում նաև տնտեսական գործունեության տեսակների նկատմամբ կիրառվել են ժամանակավոր սահմանափակումներ՝ որոշումը ուժի մեջ մտնելուց (որոշումը ուժի մեջ է մտնում 2020 թվականի ապրիլի 1-ին՝ ժամը 00:01-ին) մինչև 2020 թվականի ապրիլի 12-ը ժամը 23:59-ը, արձանագրում եմ, որ Ընկերությունը օբյեկտիվորեն զրկված է եղել սահմանված ժամկետում անհամապատասխանությունները շտկելու և Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ներկայացնելու հնարավորությունից, ուստի նման պայմաններում հնարավոր չէ արձանագրել «Գոլդշին» ՍՊԸ-ի կողմից Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորության խախտման փաստը, հետևաբար գտնում եմ, որ Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 16.04.2020թ. թիվ 26/26-1/5678-2020 գրությամբ «Գոլդշին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**